ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 09/143511-24 2024թ.

MUTQ 37-02
30-08-2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԻՄ-ԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՆԱՀԻՏ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Ասատրյան,

Ի պատասխան Ձեր՝ 27.08.2024թ. հ. Դ-108728-24 գրության, որում բարձրացնում եք համայնքային ծառայողների աշխատավարձերի վերանայման հարցը, տեղեկացնում ենք հետևյալը.

Մենք լիովին գիտակցում ենք Ձեր կողմից նշված մտահոգությունները, գնահատում ենք համայնքային ծառայողների նվիրվածությունն ու աշխատանքը և ցանկանում ենք տեղեկացնել, որ.

- 2021 թվականին արդեն իրականացվել է համայնքային ծառայողների աշխատավարձերի շուրջ 30 տոկոս բարձրացում:
- Գրությամբ նշված՝ ՀՀ տնային տնտեսություններում ընտանիքի անդամների միջինացված 3-4 անձի պարագայում համայնքային ծառայողին որպես ընտանիքի միակ աշխատող անդամ դիտարկելն այնքան էլ ընդունելի չէ:

Կարևոր է նշել, որ աշխատավարձից բացի, համայնքային ծառայողներին տրամադրվում են նաև կարևոր սոցիալական երաշխիքներ: Մասնավորապես, բոլոր համայնքային ծառայողներին տրամադրվում է անվճար բժշկական ապահովագրություն, ինչպես նաև հնարավորություն՝ զգալի զեղչով հիշյալ ապահովագրության փաթեթում ներառել նաև ընտանիքի անդամներին: Սա նշանակալի օգուտ է, որը նպաստում է աշխատողների սոցիալական պաշտպանվածությանը և առողջության պահպանմանը:

Միևնույն ժամանակ, համայնքային ծառայողների սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելու համար տարվում են շարունակական, համակարգային աշխատանքներ՝ համայնքային ծառայողների և Երևանի ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների վարձատրության վերանայման ուղղությամբ՝ պահպանելով հավասարակշռությունը պետական համակարգի այլ ոլորտների միջև: Այս նպատակով, Երևան քաղաքի 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսվել է Երևանի քաղաքապետարանի աշխատավարձային ֆոնդի 30% բարձրացում 2024թ. համեմատությամբ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ Ժ/Պ՝

Ստորագրող
ԱՐԹՈՒՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
3609690143

2024-08-29 17:39:32 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԱՐԹՈՒՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Կատարող՝ Լ. Հարությունյան
Կազմակերպությունների եկամուտների ու ծախսերի ծրագրավորման և մոնիտորինգի բաժին
Հեռ.՝ 011-514-184